ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Գառու Գրուպ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
36	Կոշիկ կիսաճտքավոր, սպայական Բաղկացած է կոշկերեսի երեսամասից, հետնամասի արտաքին գոտուց, ճտքերից, լեզվակից, հիմնական ներդիրից, փափուկ եզրակից, հետևամասում՝ կրունկից վերև ամորտիզատորից, ներբանից և փոփոխական ներդիրից: Կաշին խոշոր եղջերավոր անասունի, սև գույնի, բարձր որակի, մշակված անջրանցիկ ծածկույթով: Կոշկերեսի և հետնամասի կաշին պետք է լինի 1.8-2 մմ հաստության, լեզվակը՝ 1.1-1.3մմ, իսկ ճտքերը 1.4-1.6մմ հաստության, քթամասը և կրնկամասը կոշտ: Քթամասը ներսից մշակվում է 1.4մմ հաստության թերմոպլաստ նյութով, իսկ կրնկամասը՝ ներսից մշակվում է 2.8 մմ հաստության թերմոպլաստ նյութով: Հիմնական ներդիրը բաղկացած է իրար սոսնձով կարակցված, առնվազն 2մմ հաստության բնական հումքից, պադոշից և կոշկի համար նախատեսված 2մմ հաստության ստվարաթղթից, որոնց մեծ դրվում է մետաղական սուպինատոր: Երեսամասի, հետնամասի, ճտքերի և լեզվակի կաշիները ներսից մշակված են թերմոսոսնձով պատված կաբարդին կամ համանման սոսնձով: Կոշիկի ներսի հատվածը մշակվում է բնական հումքով (սպիլկայով, կաշվի երկրորդական շերտ) 0.8-1.2մմ հաստության: Ճտքերի և լեզվակի հիմնական կաշվի և աստառի միջնամասը մշակվում է 2-3մմ հաստության սպունգանման նյութով: Ճտքերը վերնամասում մշակվում են փափուկ եզրակով, որը բաղկացած է ամուր, մաշադիմացկուն, ցրտադիմացկուն արհեստական կաշվից և 0.8-1.2մմ հաստության սպունգանման նյութից: Լեզվակը փակ փական: Վերնամասի բոլոր կարակցումների ամրությունը պետք է լինի 140 Ն ոչ պակաս: Կոժիկի ճտքերի բարձրությունը 21-23սմ: Բարձրությունը չափվում է ճտքի ներսի մասով, հիմնական ներդիրից մինչև ճտքի վերին եզրը: Ճտքերը քուղարկվում են 5 զույգ մետաղյա կեռիկներով և 4

	զույգ մետաղյա օղագույցներով, քիմիական մանրաթելերից բաղկացած 3.5-5 մմ տրամագծով և 150-160 սմ քուղերով: Ներբանը բաղկացած է 2 մասից՝ ներքին և արտաքին նրբաններից: Ներքին նրբանը պատրաստվում է 2-2.5մմ հաստության ամուր ռետինից, ամրությունը՝ ըստ ՇՈՌԻ 65-70: Ներքին նրբանը երեսամասի և հիմնական ներդիրի հետ կարակցվում է սոսնձման և կարման եղանակով: Արտաքին ներբանը պատրաստված է մաշակայուն պրոտեկտորային ռետինե խառնուրդից, որի ջերմադիմացկունությունը տատանվում են -55C°+ 100C°: Արտաքին ներբանի երկայնակի կտրվածքի հաստությունը պետք է լինի ոչ պակաս 6 մմ: Ներքին և արտաքին ներբանները իրար հետ կարակցվում են սոսնձման եղանակով, բարձր ճնշման տակ, կարակցման ամրությումը որ պակաս 60 Ն/սմ: Փոփոխական ներդիրը՝ բնական հումքից, սպիլկայից (պադոշի երկրորդական շերտից 2-2.5 մմ հաստության): Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում են 39-45 չափսերի: Փաթեթավորումը ստվաթղթե արկղերով, 1 արկղի մեջ 20 զույգ, արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պատսխանատու ստորաբաժան համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 5 օրինակից, որից հետո պատվիրատուն մատակարարին տրամադրում է կոշիկի քանակները ըստ չափսերի: Մատակարարը պարտավոր է երաշխավորել մատակարարված կոշիկի որակի համար, կրման /շահագործման/ ամբողջ ժամանակահատվածի ընթացքում (1 տարի), իսկ ժամկետից շուտ շարքից դուրս եկած քանակը անհատույց փոխարինել նորերով 10 օրվա ընթացքում: Անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով կոշիկի յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակից կնմուշառվի և կուղարկվի լաբորատոր հետազոտության մատակարարի հաշվին ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպություն:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Գառուլ Գրուպ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
36	